

3. Шхвацабая Н. К., Некрасова А. А. Кардиология, 17, 2, 136, 1977.
4. Damas J. C. R. Soc. Biol., 171, 3, 685—689, 1977.
5. Deis R. P., Vermouth N. T. J. Reprod. and Fert., 45, 2, 383—387, 1975.
6. McGiff J. C. Life Sci., 16, 781—832, 1975.
7. Nasjletti A., Colina-Chourilo J. Fed. Proc., 35, 2, 189—193, 1976.
8. Silver M. J., Smith Y. B. Life Sci., 16, 11, 1635—1648, 1975.
9. Vane J. R., Ferreira S. H. Life Sci., 16, 5, 781—783, 1975.
10. Zusman R. M., Keiser H. R. J. Biol. Chem., 252, 6, 2069—2071, 1977.

«Биолог. ж. Армении», т. XXXV, № 12, 1982

КРАТКИЕ СООБЩЕНИЯ

УДК 631

ՎԻՐԳԻՆԻԱՆ ԵՎ ԿԱԶԱԿԱԿԱՆ ԳԻՃԻՆԵՐԻ ԿՈՆԱՀԱՏԱՊՏՈՒՂՆԵՐՈՎ ԲԱԶՄԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱՍԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Է. Կ. ԼԱՎԳՅԱՆ

Մեր հանրապետության բնակավայրերի կանաչապատման ու անտառապատման ասպարեզում մեծ նշանակություն կարող են ունենալ վիրգինյան *Juniperus virginiana* և կազակական *J. sabin* գիճիները, որոնք տեղի հողակլիմայական պայմաններին արդեն հարմարվել են, առատ պտղաբերում և երբեմն էլ տալիս են ինքնացանք: Որպես չորադիմացկուն տեսակներ դրանք տառվել պիտանի են հարավային չոր կլիմա ունեցող շրջանների կանաչապատման և անտառապատման համար: Բացի այդ, կազակական գիճին լավագույններից մեկն է էրոզիայի ենթարկվող թեք լանջերի ամրացման համար: Այս ամենի հետ մեկտեղ, ինչպես վիրգինյան, այնպես էլ կազակական գիճիներն աչքի են ընկնում բակտերիոցիտ հատկությամբ, արտադրում են անտիբիոտիկ նյութեր, որոնք ոչնչացնում են շրջապատի վնասակար մանրէները:

Չնայած դրան, մեր հանրապետությունում գիճու այս երկու տեսակներն էլ դեռևս սահմանափակ կիրառում ունեն, մասսայաբար չեն բազմացվում: Դրա հիմնական պատճառը պետք է վերագրել կոնահատապտուղներով դրանց դժվար՝ երկարատև և քիչ տոկոսով բազմացմանը:

Ըստ գրականության տվյալների [1, 2, 3] սերմերը դաշտային պայմաններում ծլում են մեկ, իսկ երբեմն էլ երկու տարվա ընթացքում: Ելնելով դրանից՝ մշակել ենք դրանց բազմացման շատ պելլի հեշտ եղանակ: Վիրգինյան և կազակական գիճիների կոնահատապտուղները մթերել ենք հոկտեմբեր ամսին, լրիվ հասունացած վիճակում: Հավաքված կոնահատապտուղները մեկ-երկու շաբաթ պահվել են թղթյա սովորական պարկերում, որտեղ դրանց առկալությամբ և օդի քիչ թափանցման շնորհիվ դիտվել է ջերմաստիճանի ղգալի բարձրացում ($25-30^{\circ}\text{C}$), (դա նպաստել է կոնահատապտուղների պտղամսի խմորմանը, իսկ վերջինս դրականորեն է ազդում սերմերի ծլունակության վրա): Այնուհետև սերմերը մաքրվել են պատյաններից: Մաքրված սերմերն առանց չորացնելու 1:4 հարաբերությամբ խառնվել են գետի ավազի հետ և 3—4 ամիս պահել խոնավ վիճակում, դրսում, ծածկված արկղների մեջ՝ մկներից և թռչուններից պահպանելու նպատակով: Այդ ընթացքում խառնուրդը

մշտապես պահվել է խոնավ, որպեսզի սերմերը չկորցնեն իրենց ծլունակու-
թյունը:

Այնուհետև սերմերը ցանվել են փետրվարին՝ ջերմատանը, մարտին՝ ջեր-
մոցում և ապրիլին՝ դաշտում, մարգերի մեջ, նախօրոք պատրաստված հողա-
խառնուրդում (երկու մաս հող, մեկ մաս շլակ ավազ, մեկ մաս փտած գոմաղբ
կամ տորֆ): Բոլոր տարբերակներում էլ ցանքը ծածկվել է բուսահողի բարակ
շերտով, ջրվել է չափավոր ու վահանով ստվերացվել:

Փորձը կրկնվել է մի քանի տարի անընդմեջ, որի արդյունքները բերված
են աղյուսակում (աղ. 1):

Աղյուսակ

Վերջինյան և կազակական գիհիների կոնահատապտուղների ծլման
ընթացքը տարբեր պայմաններում

	Սերմերի քա- նակը հատով	Ջերմատանը		Ջերմոցում		Դաշտում	
		Ծ լ մ ա ն տ ո կ ս ւ ը					
		Գ հ ի ի					
		Վերջին- յան	Կազա- կան	Վերջին- յան	Կազա- կան	Վերջին- յան	Կազա- կան
Յոսրի ժամկետը		18 3		25 3		25/4	
Մշակված սերմերով	10000	80	90	70	80	65	70
Ստուգիչ	10000	20	20	15	25	10	15

Ծլման տևողութունը օրերով

Մշակված սերմերով

20—25

30—40

Ստուգիչ

100—300

Աղյուսակի տվյալներից և մեր դիտողություններից պարզվում է, որ
ջերմատանը և ջերմոցում մշակված սերմերը ծլում են ավելի կարճ ժամանա-
կամիջոցում՝ 20—25, իսկ դաշտում՝ 30—40 օրում: Ստուգիչ տարբերակի սեր-
մերը ծլում են 100—300 օրում: Չնայած որ առաջին տարում ծիլերը դաշտում
դանդաղ են աճում, այնուամենայնիվ, դրանք ավելի կոփված են ու երկրորդ
տարում դրանց աճն արագանում է՝ անցնելով ջերմատանն աճած սերմնաբույ-
սերից: Թե՛ ջերմատանը և թե՛ դաշտում կազակական գիհու սերմերի ծլունա-
կույթյունն ավելի բարձր է (70—90%), քան վերջինյան գիհունը (65—80%):
Երկու տեսակների սերմերն էլ ջերմատան պայմաններում ցուցաբերում են
ավելի բարձր (80—90%), իսկ դաշտում համեմատաբար ցածր (65—70%)
ծլունակութուն: Բոլոր տարբերակներում էլ մշակված սերմերի ծլունակության
ոռոկոսը ստուգիչի համեմատ բարձր է:

Սկզբնական շրջանում ծիլերի աճման համար շատ կարևոր են ստվերա-
ցումն ու չափավոր ոռոգումը, հակառակ դեպքում ծիլերն այրվածքներ են
ստանում արևի ճառագայթներից, իսկ առատ ջրելիս հիվանդանում են ֆուզա-
րիոզով, չեն ունենում պահանջվող կայունությունը և աստիճանաբար ոչնչա-
նում են:

Ֆուզարիոզ հիվանդության նշանները նկատելու դեպքում նախ ոռոգվող
ջուրը պետք է չափավորել, ապա վարակված օջախներում բարակ շերտով ցա-
նել լվացքի «այնայի» փոշի, որը մի քանի անգամ կրկնելուց հետո վարակի
օջախը վերանում է:

Գիհու հիշյալ երկու տեսակների սերմնաբույսերն էլ ցանքամարգերում և
ջերմոցում՝ արկղների մեջ, կարող են մնալ երկու տարի, որից հետո անհրա-
ժեշտ է տեղափոխել տնկարան:

Այսպիսով, բերված տվյալներից կարելի է եզրակացնել, որ Երևանի հոդակլիմայական պայմաններում գիհու հիշյալ երկու տեսակներն էլ դաշտում մասսայաբար հնարավոր է աճեցնել: Դրա համար կոնահատապտուղները հարկավոր է մթերել հոկտեմբերին և 10—15 օր պահել պարկերում՝ համեմատաբար բարձր (25—30°C) ջերմության պայմաններում, որի դեպքում սերմերը ծլում են կարճ ժամանակամիջոցում (20—40 օրում): Միած սերմերից փարթամ բույսեր աճեցնելու համար մինչև նրանց 1—2 տարեկան դառնալը անհրաժեշտ է տալ չափավոր ոռոգում ու ստվերացնել:

ՀՍՍՀ ԳԱ ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ստացված է 5. XI 1981 թ.

Л И Т Е Р А Т У Р А

1. Григорян А. А. Интродукция растений и зеленое строительство. Бюллетень Ботанического сада, 24, Ереван, 1977.
2. Жеронкина Т. А., Рубаник В. Г. Можжевельники в озеленении, Алма-Ата, 1976.
3. Темберг Я. Г. Деревья и кустарники для озеленения Таджикистана, 34, Душанбе, 1965.

«Биолог. ж. Армении», т. XXXV, № 12, 1982

КРАТКИЕ СООБЩЕНИЯ

УДК 633.11.631.523.55

СРАВНЕНИЕ СПЕКТРОВ ГЛИАДИНОВ АРМЯНСКИХ И АМЕРИКАНСКИХ ПРЕДСТАВИТЕЛЕЙ ДИПЛОИДНЫХ ПШЕНИЦ

С. С. ЗАМИНЯН, Л. О. ДЖАНПОЛАДЯН

Ключевые слова: глиадины, филогения пшениц, электрофорез.

Исследование спектров глиадинов диплоидных пшениц стало играть важную роль в познании эволюции этого рода [3, 6]. Как известно, структура и электрофоретические свойства глиадинов строго наследуются, что дало основание использовать метод электрофореза для сравнения различных геномов пшениц [5]. Благодаря этому удалось выяснить, что диплоидные пшеницы—*T. monosocum*, *T. boeoticum* и *T. urartu*—приняли участие в формировании тетраплоидных, а затем и гексаплоидных пшениц, причем разными авторами были высказаны различные предположения относительно роли тех или иных диплоидных видов в этом процессе. Так, согласно Джонсону [5], *T. boeoticum* и *T. urartu* были исходными для образования пшениц ряда *Timopheevii* и ряда *Emmer*, в то время как Конарев [2] находит, что *T. urartu* не участвовал в формировании ряда *Timopheevii*, а *T. boeoticum*—ряда *Emmer*. Имеются и другие расхождения в вопросах происхождения